Հարգելի գործընկեր,

ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող և Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող **«ԵՄ-ն հանուն երկխոսության. Փուլ II»** (**EU4Dialogue - Phase II)** ծրագրի շրջանակում հայտարարվում է **դրամաշնորհային մրցույթը**: (https://procurement-notices.undp.org/view_notice.cfm?notice_id=98846)

Մրցույթի նպատակն է աջակցել Հայաստանում հակամարտությունից տուժած և սահմանամերձ համայնքներում տեղական նախաձեռնություններին՝ ուղղված կենսապայմանների բարելավմանը, մարդկային անվտանգության ամրապնդմանը, համայնքային դիմակայունության բարձրացմանը և սոցիալական համախմբմանը:

Դրամաշնորհային առաջարկներ կարող են ներկայացնել Հայաստանում գրանցված, տեղական մակարդակում ներկայություն ապահովող, չափանիշներին համապատասխանող հասարակական կազմակերպությունները, հիմնադրամները և շահույթ չհետապնդող այլ կազմակերպությունները:

Դրամաշնորհի չափը յուրաքանչյուր ծրագրի համար կազմում է **23,000–90,000 ԱՄՆ դոլար**, իսկ իրականացման առավելագույն ժամկետը՝ **16 ամիս**: Հայտերը պետք է ներկայացվեն՝ առաջնորդվելով կից ներկայացվող **Առաջարկների ներկայացման հրավերի** պայմաններով:

Խնդրում ենք լրացված հայտադիմումը, բյուջեի ձևաթուղթը և այլ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ **eu4dialogue.am@undp.org** հասցեին: Էլ. նամակի թեմայի տողում խնդրում ենք նշել. **"EU4Dialogue Phase II - Grant Scheme":**

Շահագրգիռ դիմորդների համար **տեղեկատվական/խորհրդատվական հանդիպումը կկայանա 2026 թվականի հունիսի 08-ին, ժամը 16:00-ին**, հետևյալ Zoom հղմամբ՝ **Zoom Meeting link**. (https://undp.zoom.us/meeting/register/3R6NEQanS3qWWQuelNJ6-A) Գրանցումը անհրաժեշտ է:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է **2026 թվականի հուլիսի 03-ը, ժամը 18:00**:

Դրամաշնորհային առաջարկի պատրաստման ընթացքում Ձեր պարտականությունն է ապահովել, որ այն հասնի վերը նշված էլեկտրոնային հասցեին, վերջնաժամկետին կամ դրանից առաջ: Այն առաջարկները, որոնք ստացվել են ՄԱԶԾ-ի կողմից նշված ժամկետից հետո կամ թերի են, չեն գնահատվի: Յուրաքանչյուր կազմակերպության համար թույլատրվում է միայն մեկ հայտադիմում: Հայտը լրացվելուց և ներկայացվելուց հետո առաջարկի փաստաթղթերի վերանայված տարբերակները չեն ընդունվի:

Հարգանքով՝

EU4DII ծրագրի թիմ